


ՔԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍ

Պուրկարիոյ համար	12 ֆր.
սա եկամտի վեցամսեայ	6 »
Սրբապատկանի համար	15 »
վեցամսեայ	8 »
Սանկտպետրի համար	3 »
սարեկան վեցամսեայ	150 »

Իսկուսական տար 40 ս. իսկ վեցամսեայ երեսն համար 20 սանկտպետրի կ. երեսն ակադեմիական համար 20 0/0 գեղյ կըլլայ :

Վաճառքի համար ձևի 40 սանկտպետր



R. P. Kalémcarian Mechitaristengasse W. 4. (Autriche) Vienne

Նամակ եւ պր. գրկե խմբագրութեան

Редакция на востокѣ Шаражунѣ Варна

Redaction du journal "Char,oum" (Bulgarie) Yarna

Պուրկարիոյ համար ձևի 15 ՍԱՆԿՏՊԵՐ

Սրբապատկանի համար ձևի 20 ՍԱՆԿՏՊԵՐ

Գրութեան եւ չեմբուսի

ՆՈՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ՇՐՈՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՎՇՈՒԹԻ ԵՒ ՇԱՐՍԱՑ ՕՐԵՐԸ

ՉՈՐԵՎՇՈՒԹԻ Ի ՔԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՃԱՆԳԻՆԸ ԳԵՏԻ ԵՒ ԿԱՆԵՆԿՎ ՎԱՅՐԷ

ԹԱԿՈՒՄ 4. 2. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ (Սարապ) ՎԱՍԻՆՆ

Չանապան ընկերութեան արժեքը կը գտնուի 5-12

ԲԱՑ ՆԱՄԱԿՆԵՐ

Դաշնակցական ընկերներին

4

Ընկերներ, նախորդ նամակներում պարզեցի որ այժմ թէև հայ ժողովուրդը աւելի յեղափոխական է, քան եղել է երբևէ քայքայ պայմաններին էլ աւելի զժառանգել են ու եւրոպան էլ, ի հարկէ պաշտօնական եւրոպան, մեր երեւակայածից անտարբեր է գեպի մեր գատու վազող իր գրական աշակցութիւնը. Այս բոլորի հետ միասին շեշտեցինք նաև որ այսուհետև մեր ամբողջ ճիգերը պէտք է թափել զօրանք ու երկարատեւ շարժումներ ստեղծելու, որպէսզի կարենանք յոսուել եւրոպայի աշակցութեան վրայ. Այս նպատակին հասնելու համար խոստացայ առաջարկել միջոցներ. սրանով կատարում եմ այդ խոստումն հաւատարմութեան լինելով թէ՛ իմ առաջարկելիքները շատ զաշնակցական ընկերների լուրջ խորհրդածութեան նիւթ են դարձել ու հասել է ժամանակը նրանց զննել ամբողջ ընկերների առջև. Ընկերներ, իմ առաջարկած առաջին միջոցն է—որ մենք բոլորս անմիջապէս պահանջենք զաշնակցական մարմիններից որ նրանք մինչեւ Ընգհանուր ժողովը ոչ մի ապստամբական քայլ չանեն, ուր որ էլ լինի, որովհետև ուժեղ, զօրաւոր, Թուրքիան ու եւրոպան ցնցող գործ կարճ միջոցում անկարելի է անել, իսկ փոքրով ոչ միայն չէ կարելի եւրոպական միջամտութիւն ձեռք բերել, այլև կարելի է թէ ժողովրդին և թէ կազմակերպութեան վնաս հասցնել. Երկրորդ պահանջենք նայն ձեռնահաս մարմիններից որ զաշնակցական

գործիչներին, պրոպագանդիստներին և թերթերին խստիւ արգիլեն, նոյն իսկ պատժել սպառնալով, հակառակորդների առջև կուսակցութիւնը գործօնցոյց տալու, դրամ հանգանակելու և համակիրներ որտալու համար հրապարակի նիւթ դարձնեն այնպիսի վայրերի անունները, որոնցում ապստամբական գործի պատրաստութիւններ են տեսնուում. Երրորդ պահանջենք որ իրբեւ Դաշնակցութեան պաշտօնական պրոպագանդիստներ ժողովրդին ներկայանան լուրջ մտաւոր պաշարով մարդիկ, որոնք հայ եւրիտասարդութեան բացի «շարժենք փշրենք», կեցցէ յեղափոխութիւն, կեցցէ ազգը, սովորական պարճած բառերից, լուրջ յեղափոխական մտաւոր սրունուդ հայթայթելու ընդունակ լինեն. Այս անմիջական պահանջներին յետոյ, մենք զաշնակցականներու պարտաւոր ենք մեր մէջ հէնց այժմվանից լուրջ պրոպագանդ անել հետեւեալ անմիջական խնդիրների մասին, որպէսզի յառաջիկայ Ընգհանուր ժողովին ներկայանանք որոշ և անդրդվելի եզրակացութիւններով, ու կարենանք մեր կազմակերպութեան տալ պայմանների պահանջած գիրքը և ընթացքը. Իմ կարծիքով զալիք ընդհանուր ժողովը պէտք է անպատճառ դրական լուծում տայ հետեւեալ խնդիրներին. Առաջինը՝ կազմակերպութեան խստնորդ ձևը պարզել, զտել. Այսօր Հ. Յ. Դաշնակցութիւնը մի կիսակենտրոն և կիսապակենտրոն կազմակերպութիւն է. նա թէև կենտրոն չունի, բայց ունի մարմիններ, որոնք կենտրոնի դեր են կատարում, ու այդ պատճառով կազմակերպութեան մէջ գոյութիւն ունենցիկու հոսանքներ—կենտրոնաձիգ և կենտրոնախոյս, որոնք շարունակ ընդհարում են և յաճախ կազմակերպութիւնը քոսսի վերա-

ծում. Պէտք է յստակ ձեւ. կամ սնուցայման կենտրոնացում. կամ անպայման ապակենտրոնացում. Երկրորդ՝ թերեւս ամենանշարժեշտ, որ Դաշնակցութեան գոնէ բարձր մարմինները կազմված պէտք է լինեն անպայման ինտելիգենտ և անձնէր յեղափոխականներից, որպէսզի Դաշնակցութեան ընդհանուր ժողովները կազմվեն իրապէս ձեռնհաս, իրենց ստանձնած գործի և պատասխանատուութեան ծանրութիւնը ըմբռնող մարդկանցից, ու հայ ժողովրդի բախտը որոշող վճիռները տան գիտակցօրէն, այլ ոչ սրա նրա մատին ու դէմքին նայելով քէտրկեն. Երրորդ՝ ընդունել այն սկզբունքը թէ Դաշնակցութեան ընդհանուր ժողովին գնալող ամեն մի պատգամաւոր պէտք է նախապէս համաձայնի որ ինք պարտաւոր է երկիր մտնել, եթէ այդ պահանջի ընդհանուր ժողովը կողմից. Չորրորդ՝ պէտք է պահանջել որ Դաշնակցութեան Ընգհանուր ժողովը քէտրկութեամբ գաշնակցական ու է մարմին անդամ ընտրում է միայն և միայն իրապէս յեղափոխական մարդկանց. Իմ կարծիքով, եթէ մենք մինչեւ ընդհանուր ժողովը ունէ հապճեպ քայլ չանենք, ու Ընգհանուր ժողովի մէջ անցնենք վերը յիշած պատշափութեան հիմքերն ու սկզբունքները, Դաշնակցութիւնը կը հասնի անհրաժեշտ և ցանկալի բարձրութեան, ու մենք կը ստեղծենք այն գործը, ինչ որ կեանքը պահանջում է. ՎԱՐԴՈ

ների Խորհրդածողով: Այլ եւ այլ նրկատուն երով զեկտեմբերի 1ին միայն նրա որոշումները հրատարակութեան արեցին համախորհրդայն մասնով մէջ. Հ. Յ. Դաշնակցութիւնը եւս ունեցաւ այդ ժողովում իր պատգամաւորը, եւ ահա այսօր պայմանաւոր հասնելուց յետոյ, ներկայացնում ենք հայ հասարակութեանը եօթնօրեայ խորհրդակցութիւնների արդիւնք՝ ժողովի վաւերացրած արձանագրութիւնը. —)o(— Խ Ո Ր Շ Ր Գ Ս Ժ Ո Ղ Ո Վ Ռուսաց կայսրութեան ընդգիծագիր եւ յեղափ. կազմակերպութիւնների (Արձանագրութիւն) Ամենից ստալ ժողովը համաձայնուեց զնելու համար իրբեւ ինք բոլոր յետագայ դատողութիւնների, հետեւեալ զեկազարդ շարժառիթներն ու սկզբունքները. 1) Ռուսաստանի քաղաքական կեանքի ներկայ վայրկեանում քաղաքական կոնքր առանձնապէս սուր ընաւորութիւն ունի. Մի կողմից ընդգիծագիր եւ յեղափոխական ուժերի արագ աճումը, միւս կողմից՝ գոյութիւն ունեցող իշխանութեան իրական կազմալուծումը եւ տիրող ուժի միայնակումը՝ դարձնում են նրա վերացման հարցը՝ եւ՛ կենսական եւ՛ ժամանակայարար. Ռուսի եւ այդ ուժերի դէմ կոտոր զանազան կազմակերպութիւնների համաձայնած գործունէութիւնը դառնում է առանձնապէս ցանկալի. 2) Դիմադրական եւ յեղափոխական կազմակերպութիւնները համաձայնեցնելու ներկայ փորձը յայտնում է իբրեւ առաջինը. եւ ցանկալի է դրանել նրան այնպիսի պայմաններում, որ նրա հետեւանքը չլինի լոկ արձանագրումը ամէնքին յայտնի առաձայնութիւնների, որոնք բաժանում են կուսակցութիւնները, այլ պարզարանումը այն ընդհանուր կէտերը, որոնք կարող են հիմք ծառայել համաձայնած գործունէութեան համար, ներկայ պատմական վայրկեանում. 3) Այդ նպատակին հասնելու համար, Խորհրդածողովը անհրաժեշտ է ընդունում Ա) Սահմանափակել ներկայ խորհրդակցութեան նիւթը, հաստատելով այն ընդհանուր գաղափարների միջինումը (նապատրոյն չսփր), որը արդէն ներկայումս մտնում է խոր-

ԾԵՂԱՓՈՒ. ԴԱՇՆ ՉԱՐԻՉՄԻ ԴԵՄ (Շար. Ասխուրդ քիւնկ) Մի քանի շտաբ սրանից տալ Պարիզում աեղի ունեցաւ Ռուսաստանի զանազան ազգերի դիմադրական և յեղափոխական կազմակերպութիւն-

հրդեհացող կուսակցութիւնների ծրարագիրներին մէջ եւ որի պարզարար նստմանը ներդրում է անձեռնմխելի ամէն մի առանձին կուսակցութեան ծրարքի բոլոր կէտերը եւ տարտիկահան բոլոր ձեռքերը:

Բ) Եւ սակայն, գաղափարների եւ նպատակների այդ ընդհանուր պաշարք սահմանելու միջոցին՝ չբառապահանալ միայ արձանագրելով մի քանի շատ թէ քիչ վերացական սկզբունքների ընդհանրութիւնով, այլ եւ ըստ կարելոյն հասնել կոնկրետ համայնութեան՝ քաղաքական կուսակցութեան հերթական հարցերի առիթով:

Հիմնելով այդպէս ընդունեալ ընդհանուր դրութիւնների վրայ, Ժողովը քննեց համաձայնութեան եւ հանրաշխիք գործակցութեան հնարաւոր կէտերը, դիտարկեց, հետեւեալ կերպ տեսակէտներով:

- Ա) Քաղաքական կազմ
Բ) Ազգայնական հարց
Գ) Կուսակցութեան խնդիրը

Քաղաքական վերակազմութեան նկատմամբ, որին հաստատապէս ձգտում են ներկայացած բոլոր կազմակերպութիւնները, հնարաւոր եղաւ հաստատել, որ կուսակցութեանը ներպատակ կարող է լինել ոչ միայն քանակականութեան տարաբաշխումը թանկարժեք սակերը եւ ոչ միայն քաղաքական ազատութեան ու հիմնական իրաւունքների ընդհանուր բանաձեւը, այլ որ վաճառական խորհրդակցող կուսակցութիւնների համար ընդհանուր կէտ է յայտնուում նաեւ ձգտումը՝ իրականացնելու քաղաքական վերակազմութեանը անհրաժեշտ ոգով:

Որպէս շուտփոխ ապացոյց այդ ընդհանուր ձգտման՝ երեւում է որ բոլոր կուսակցութիւնների կողմից հաստատուած այն հանգամանքը՝ որ ժողովրդական ներկայացուցչութեան հիմնական սկզբունք պիտի լինի ընդհանուր ընտրողական իրաւունքը:

Ազգայնական խնդրի վերաբերմամբ յայտնեց ընդհանուր ցանկուկութիւն՝ կիրառել որակավարական գաղափարը նաեւ այդ խնդրի լուծման համար հաստատուելիք ընդհանուր հայեցակէտի վրայ: Մանրամասն քննութեան չենթարկելով վիճելի կէտը այն զերի մասին, որ ազգայնական խնդրին վիճակեալ է խազում ուսաց վերակազմելով թագաւորութեան ապագայ պետական իրաւունքի ստանձնարարման մէջ, — Ժողովը, այնուամենայնիւ, հնարաւոր սեպից արձանագրել, որ ազգայնական խնդրի լուծման կետում Սորհրդակցութիւնները համաձայնուած են, ընդունելով միջին էջ՝ որ ամէն մի ազգութիւն ինքնարոշման (իր ճակատագիրը տնտեսաբար) իրաւունք ունի նաեւ իրաւունք վայելելու ազգայնական զարգացման ազատութիւն՝ կրայնաւորեալ օրէնքներով:

Ժողովը միաձայն ընդունեց, որ ներկայ ուժի վրայ հանդիսանում է ոչ թէ իրեն կազմակերպութեան գոտի, այլ ազգութիւնների խաղաղ, միատեղ քաղաքակրթական աշխատանքի, այդ իրեն կազմակերպութեան քննութեան, որ հաստատապէս ծանրացած է ազգութիւնների վրայ: Կուսակցութեան ձգտումների գէտ, որոնք աղաւաղում են Մայրերի հաստատակարան կեանքի հիմունքներն իսկ, կուսակցութեան ձգտումներն արհեստական գրգռման

դէմ պէտք է միանայ այն կուսիւն, որ պիտի մղէ արտաքին յարակուսակար քաղաքականութեան դէմ, որովհետեւ՝ թէ՛ ուսացման ձգտումները եւ թէ՛ քաղաքական գաղափարները հաստատակարան կարծիքի ուշադրութեան ներքին քաղաքականութեան խնդիրներից՝ ձգտելու համար ներկայ ուժի վրայ գոյութիւնը:

Պործունէութեան եղանակների խնդրի վերաբերմամբ՝ ի հարկէ, ամենից առաջ հաստատուեց նրա այլազանութիւնը, որ բոլորով է այլեւայլ կուսակցութիւնների տարբեր բնաւորութիւնից, կազմից, նպատակներից եւ գործունէութեան պարզանքներից: քայց միևնույն ժամանակ հաստատուեց եւ այն՝ որ հէնց այդ այլազանութիւնը որոշ չափով կարող է հանդիսանալ իր պայման ընդհանուր ազգութեան եւ որ, ուրեմն, ներկայ դէպքում բոլոր կուսակցութիւնների գործունէութեան լիակատար ազատութիւնը ոչ միայն չէ հակասում, այլ ընդհակառակը, գտնուում է կատարեալ ներդրանակութեան մէջ՝ համարաշխարհագրութեան նրանց դիտարկութիւնների հետ: Իրեն առաջին եւ շատ կարեւոր քայլ այդ համարայն գործողութիւնների խորհրդակցութեան ներկայ արձանագրութեան հրատարակումը: Ժողովը իր վճիռներին աւելի լայն հրատարակութիւն տալու համար՝ մշակեց նոյնպէս մի կարծ յայտարարութիւն այն սկզբունքների, որոնք ընդհանուր են խորհրդակցող կուսակցութիւնների համար: այդ յայտարարութիւնը կցուում է ներկայ արձանագրութեանը:

ԵՐՐՇԱԿ»

(Շարունակելի)

ԲՕՐԴ—ԱՐԹԻԻՐԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ԵՒ Վ Ա Ա Ն Ա Ն Ա

—o—

Այս վերտառութիւնով յօդուած մը գրած, յունվար 2ի երկոյնի նամակատան ճամբուն վրայ էլինք, երբ յանկարծ լրագրողական մեր կանչուողուքը կը կասեցնեն մեր քայլերը եւ կը ստիպուենք թերթ ձեռք առնուլ...

Որպիսի՞ տարբիւնակ լուր... Բօրը Արթուրի յանձնումի բանակցութեան առաջարկը Շիտիկի կողմէ, ուղղուած նօզիին...

Մենք այդ յօդուածին մէջ, հետեւելով քայլ առ քայլ առաւել քան տաս ամսուայ ճակատագրին այդ վիթխարի ճիւղի բերքին, զոյց կուտայինք մեր ընթերցողներուն, թէ՛ ի՞նչու Բօրթ Արթուր հակառակ ամէն կողմէ արտայայտուած կարծիքներուն, ո՛չ միայն չի նկատուած չառնուեցաւ քանի մը շօթուած եւ աստուելն մէկ երկու ամսուան ընթացքին—էնչպէս հանդիսատեսներու մեծամասնութեան համոզումն էր, անշուշտ, ի նկատի ունենալով այն գարնաբայի վիստերները, որ ուստ նախարար կ'իյնէ միւսին Ետեւէն, մինչեւ գլխաւոր ծովակալ Մարթովին 600 կեանքերով միասին թիթլորագլուխի խորտակումը ապրիլ 13ին —այլ եւ մինչեւ այսօր ալ ցոյց տուաւ այնպիսի հաստատակամ եւ ստան ընդդիմադրութիւն մը, որ շատ խիչբուռ վիճակուած էր:

Հիմա, որ Բօրթ Արթուրի բազոր դարձաւ, հիմա՛, որ այս անկուշտ հրէջը կը տացաւ ու իր ծարաւը յա

գեցուց իր կուշ տուած տասնեակ հազարաւոր զինակներով ու անոնց թարմ արիւնով, կուզենք դառնայ ուրիշ կէտի վրայ եւ պարզել ընթերցողին այս ահաւոր տուամին վսիւճանը:

Ինքզեքու պատմութեան մէջ, Բօրթ Արթուրը պիտի թողու անունը՝ որ յաւերժական մնալով հանդերձ, թերեւս նսեմացնէ նաեւ իր շատ մը նախորդներն:

Եւ մինչդեռ արեւելեան տարեգրութիւնները փառքերով հերոսութիւններով եւ զրուատիքներով մը յաւերժացնեն այդ անունը, անդին, հրկու սերունդ պիտի մեծնայ այդ միեւնոյն Բօրթ Արթուրով: —ոուսական ու ճարտական նորագոյն սերունդը, ինչպէս որ եղաւ մինչեւ այսօր: —մէկը՝ վրէժով՝ միւսը՝ փառքով:

Ասկէ մօտ տաս տարի առաջ, երբ Ռուսական Ճերմակ Ճերմակ իր ճանկերը տարածելով այդ բերդին վրայ, գրաւեց զայն, Լօրտ Սալըզարի հետեւելով մարգարեացած նախագուշակութեամբ ըրած էր իր մէկ ատենաբանութեան մէջ: —Ռուսաստանը զերուելով Բօրթ Արթուրը, որ իրեն մասնաւոր օգուտ մը չունէր երբէք, իրեն համար ապագայ սեփ աղէտի մը դուռը բացաւ, որովհետեւ, ճարտնացիք ուշ թէ կանուխ, օր մը դարձ եւս պիտի տիրանան անոր: —

Այս խօսքերը այդ պահուն սիրիլայի բանագորչանքներ կը նկատուէին, երբ դիւրին ճարտնացին տակաւին կանոնաւորապէս ծանօթացուած ալ չէր լուսաւոր աշխարհին, երբ չինական ազետայի պատերազմը յոգնեցուցեր եւ ընկճեր էր զայն—հոգ չէ թէ յաղթանակով պահուածու Բայց եւ այնպէս, ճարտնացին չը մոռցաւ իր պարտութիւնը: Արեւելեցի յատուկ զիւցաղնակներ կրկնելով ու օրորներով վիճեցան ինկնց հայրերու զուակներն ու եղբայրները, վրէժ, զոռացին ու թոթոցուցին շրջիկ աշուղին յուսահատ օսաղծին լայնիւր: Մեծ էն փոքր ստրկեցաւ աւել թշնամին՝ կանգնել դեռ անաջին շաւղին մէջ եւ իր դառնորեն առաջին ու վերջին բռնարք վրէժ եղան ամբարտաւան թշնամիին հանդէպ: Երբէք, որոնք է՛ն մեծած հոգիներն ալ արթնցնելու ընդունակ էին, ամենուրեք յեղեղուած ձայնարկումներ եղան ճարտնացի ձերուկին թէ՛ ներխուտարողին, պատանդիին թէ մանուկին, տղուն թէ աղկան համար: —եւ ուրեմն, այսպիսի հոգիով եւ աւել անով մեծցող սերունդի մը համար, տարբիւնակ երեւոյթ չէր ակնատես ըլլալ զիւցաղնութիւններու, անձնուրումներու եւ քաջագործութիւններու, որ Սպարտայի մը նախանձր կարող էին շարժել, տեսնել կարժակերպութիւններ՝ կամաւոր ու ինքնաբերաբար մեծոզներու՝ բազկապած է՛ն մատապահաս ու գարունազարդ կեանքերէ, որոնք հազարապատիկ լուսացոյն կը համարէին ինքնաուսուցանութիւնը, քան այդ անարգ թշնամիին հովանաւորութեան ներքեւ՝ անոր հացով եւ ջրով ապրիլը:

Եւ ճարտնացին, իր ասիացիի այս վրիժառու հոգիով հրահրելով ու զորքը ստեղծելով հանդերձ, օտար չը մնաց կեանքի պէտքերու նորագոյն պայմաններուն, օրէ օր յառաջվումը եւ աւելի ու աւելի նրբացած ու գիտականացուած միջոցներ—գիւնդարական ու նաւային անհրկարգի, ամեն ձեւի, ամեն գոյնի անբացատ-

րելի նախապատրաստութիւն, նախապատրաստութիւն մը, որ շատ քիչքար պիտի փորձէին յանձն առնել եւ աւելին՝ գրեթէ ոչ ոք պիտի լուսական համարէր տարւաւորան շնչին ժամանակամիջոցը... Բայց այս բոլոր հրաշքները գործեց ճարտնացին, ցոյց տալու «լուսաւոր» ճերմակ երեսներուն եւ խաչագոլու սպասաղէտ մեծաորներուն, որ զեզին մորթին ու «խաւարակուտ» Ասիան ալ ընդունակ է այն բոլոր կարծեցիկ յատալխաղացութիւններուն, գորս միմիայն իրենց խաչագործի զըլուան առանձնաշնորհուածը կը կարծէին: Ու զեւ այդ օրէն, արդէն պայծառը սկսաւ անկայ ծիտանին ու սգածած թողկին միջիւն, հանրածանօթ առակին շափ ծիծաղկէր արտաքին երևոյթի մը տակ... Եւ ահա, օր մըն ալ, լրացած համարելով իր ներքին խուշ ու լուս պայծառը, ձերմակ ճերմակ ճանկերուն մէջ նեցեց պատերազմական նստանքը, որը, փոխանակ իր սովորական անկուշտ հասկնով խնդու, անոր հպումը միայն հիմնովին սարսուռացուց զայն եւ ձեռնակարս ու զըլուսակարս ըրաւ:

(Շարունակելի)

ԿԸ ՊԱՅԱԼՁԵՆՔ

—o—

Վերջի տարիներս, եթէ ներքի է մեզ անուանել, «Շարժում» շատ մը խնդիրներու առթիւ կուտաղաւ մը ըլլալով հանդերձ, եղաւ նամանաւոր որքանաւորս ռազմագաղտ մը: Այս միեւնոյն սրենակներուն մէջ էր, որ առաջին անգամ երեքսն քաջամարտ վաճառական՝ որքանաճառ պատուելի թումբանի անուր արարքները որոնք բովանդակ հայ մամուլը եւ հասարակութիւնը սթափեցուցին եւ գործի մղեցին... Ոմանք խնդարին այս առթիւ, ոմանք անարգեցին, ոմանք արհամարհեցին, քայց եւ այնպէս, շատ մօտ ապագայի մը մէջ, այդ բոլորը հսրկող-ըտեցան իրենք ալ ձեռք առնել այդ միեւնոյն հարցը եւ դատապարտել այդ միեւնոյն անձը: Եւ պատկէշը, —Ժողովրդային նախապաշարութիւնը մտնուանդ հաւատալը քանզուեցաւ ու յանցաւորը արժանացաւ իր պատժին: —Մասնաւորեալ կենդանի մեղքներու, բարոյական անկանգնելի ինկածութեան եւ այսօր, այդ արհամարհելի միջոցով հարող, անախտան ստան անպատուութեան պատուելի, անցեալի գեղա՛ր ի՞նչ փառքը եւ մասնաւոր կողբայ եւ ապագայի համար ծրագրած զարպատներուն խորտակումը կափստայ... Եւ այսօր, կրկին որբերու ցան է, որ կը հնչուի այս միեւնոյն սրենակէտերուն մէջ, Բարեբէն, հիմա ալ ուրիշ մը դէժ, դարձեալ վաճառական մը, բայց, այս անգամ, գոհարի վաճառական... Հրատալու առաջարկութեամբ մէկը վերջերս սկսաւ՝ հոգի հանելու աստիճան երկար նամակներ տեղալ «Շարժում»-ին, վերջին քանի մը շարժումուն ընթացքին, մէկը միւսին եւ

տեւէն և Այդ յօդուածները կը պարու- նակէին ամեն ինչ, ամէն մէկ ման- րամասնութիւն Բարիկ վար դրուած որբերու կեանքէն, ճիշդ թէ սխալ, ասոր մասին դեռ բան մը չենք կը- նար ըսել: Սիրտ արիւնտտիտու աս- տիճան տխուր գեպեր կան հոն պատուած, հանգէպ անոնց, որոնք հայ ազգը այսօր պարտաւոր էր պա- նել աւելի ջերմեանց երկիր դաժու- թեամբ քան թէ եկեղեցիներուն մէջ պահած սրբազան նշխարներն ու մա- տենքները: որովհետեւ ատոնք զա- ակներն ու եզրայրներն էին անոնց որոնք իրենց արեան ու կեանքի գը- նով բացին ու հարթեցին ճանապար- քը գէշի ազատութիւն, իրենց կար- միր արիւնով գծեցին ու ծրագրեցին վարուան հայութեան երջանիկ եւ յուսատու վաղորդայնը:

Այդ նամակներուն մէջ գրուեցաւ եւ վերագրուեցաւ Էփեսոսեան ինչ զգուշի անուն որ կարելի էր գտնել, Վիւնիթր պէյին շիրուխիւնէն սկսեալ մինչեւ մատնիլ, ազգադաւ են, եւն Սակայն հարց մը, որ ինք- նին երեւան կուգայ այս բլուրին հանգէպ սա է, ինչու այս միեւնոյն պարտը կամ պարտները Զարթոյս կան լուսութիւնով մը մունջ մնացին երբ սակէ ամիսներ առաջ այդ 18 որբերը որդեգրել կը ջանար ան, ին- չու այդ պահուն չը մերկացուցին զինքը եւ չը ժխտեցին այն երկ- նասպց գովարանութիւնները, որոնք կը լլային զանազան անձնաւորու- թիւններու կողմէ, քանի որ գիտեն եղեր թէ ատոնք վարձկան գովասա- ներգուներ են. որպէսզի նոյն այդ բողոքին փոխանակ տղաքը մէկ կրա- կէն հանելով միւս կրակը ձգելու, ուրիշ ճար մը խորհէին եւ զաննք աւելի վստահելի ձեռքի մը յանձնէին, քանի որ թուականին ալ յանձնելը բացարձակ ոճրագործութիւն մըն էր: Անչուտ, եթէ Էփեսոսեան այդ ներ- կայացուածին նման ճիւղ մըն էր, չէր կրնար ըլլալ այս վերջին քանի մը ամսուան ընթացքին եւ, անկաս կած ենք, որ Բարիկի հայութեան ալ ծանօթ էր ան շատ տարիներ ա- ռաջ, ուրեմն, ինչու մինչեւ հիմա

լուսութիւն պահուեցաւ եւ հիմա է մի- այն, որ խնդրեր կը պարզուի, 4Ը պարզուի, 4Թ հրապարակուի: Այս կէտը քիչ մը կասկածի տակ կը զնէ խոնուն ընթացողը եւ ասոր տակէն կը նկատէ զանազան անձնական նը- կատումներ, զանազան զրգուած կրքերու բացայայտումները եւ վեր- ջապէս, տեսակ մը վրիժառու հոգիի մը ցոլացումներ:

Իայց եւ այնպէս, մենք, ատանց բայ մը իսկ գիտնալու եղելութեան մասին անձնապէս, ասոնցմէ եւ ոչ մէկն ալ կը վերագրենք մեր նամա- կագրին, քանի որ իրաւունք ալ չու- նինք, այլ միայն կը ստիպենք, կը պարտաւորեցնենք այդ որբերուն յարոն հանգիստացողներուն, կը պա- հանջենք իրենցմէ յանուն հայ որբե- րուն՝ հրապարակ գալ եւ բացատրու- թիւն մը տալ այս գրուածներուն, խօսուածներուն դէմ:

Շարունակելի

ՊԱՏՄԱՆԱԿՆԻ Պ. «ՀՐԱՆՏ»-ԻՆ

—()—

Պէտքը զգացել էք մաց նա- մակ մը ուղղել ինծի ոճրագործութի թիւ 677: Ես, որպէս զի «լոծիկ» ըլլամ իմ պատասխանի մէջ, պի- տի ըսեմ, անմիջապէս, որ ձեր ակնարկած յօդուածիս մէջ, եր- բէք յաւակնտութիւնը ունեցած շեմ քննադատ մը երեւնալու, ու հետեւաբար իմ քննադատական հասկացողութիւնս այնտեղ պար- զուած է շատ յարաբերական ձե- լի մը տակ, ինչ որ բնականա- բար ձեր «ըմբռնումին» հետ բազ- զատելու ուժին մէջ չէր զգտնուեր: Անչուտ եմ որ այս փոքրիկ սը- խալի ուղղումը պիտի ներողա- միտ աչքով մը դիտէք, և հետե- վաբար բոլոր ըսելիքներս, ո- ղոնցմով, բնականաբար իրար հետ դարձեալ բարեկամներ ըլ- լալէ չպիտի գաղտնիք:

Ուրեմն իմ «լրձինած» «Փարի-

զի հայ գէմբերուս» մէջ, որոնք միայն «լրձինած» եմ «ան պա- սան» քննադատութիւն մը չէ որ ըրած եմ, այլ սպասուողութիւննե- րու՝ պարզ, անհատական՝ «ոչ- ջամիտ թէ սկզբումիտ» բառին ընտրութիւնը ձեզի կը խոսուի, արձագանգ մը եղած եմ: Այդ պահուն միայն, ձեզի երեւցած եմ «բացարձակ» բայց եթէ ծան- րացած եմ ոմանց միայն, ինչ- կը մտածէք, բացասական կող- մերուն վրայ՝ ատի տլ դիտելու ու խորհելու եղանակ մըն է, ար- զէն՝ դժբաղդաբար, շատ խոշոր կամ հեղինակաւոր դէմքեր երե- ցած անձնաւորութիւններ «քիչ մըն ալ» ցոլացնել ալ ձեւով, տալու համար «քիչ մըն ալ» այդ ճամբով մտածելու թելագրու- թիւն մը՝ մեր պարզամիտ հայ հասարակութեան՝ Օ՛րբքան հա- մամիտ եմ ձեզ՝ որ մարդիկ բոլո- րովին «հրեշտակ կամ հրէշ» շեն ծնիր. բայց որքան կը յարին այն մտքին՝ որ մարդիկ աւելի գէշի «հրէշութիւն» կը հակին: Ձեմ կարծեք որ հոս ալ «բացար- ձակութիւն մը» տեսնաք, այս- տեղ ու իմ մէջս:

Միւս կողմէ քանի որ քննա- դատութեան վրայ բերիք բոսքը, ներեցէք որ թէեւ կարճ, պակաս քանի մը ամիտի խօսքեր ընեմ այդ գրական արուեստին վրայ, ու այդ պահուն իրարու հետ՝ կը հաւատամ որ թերեւս «ըմբռնու- մի» միակացութիւն մը գտնենք:

Ձեմ՝ յիշեք թէ ուր կարգացած եմ, սակայն միտքիս մէջ գրոջ- լուած կը մնան Յրանաջի մեծ ու հոշակաւոր կրիտիկ Օկտավ Միրբոյի սա տողերը. «ինչ»- կամ ինչպէս կուզէք որ ես, իմ անձս ու կրքերս իմ գրու- թիւններու սակ մէջ զգուշացնեմ, քանի որ

նոյն իմ այդ անձս է ատոնք ար- տագրողը, նոյն ինքն իմ ՆՍՍ է որ կը թելագրէ, կը յղէ իմ մտածումներս, կը կապէ իմ հո- գեմանութիւնս:

Ինչպէս կուզէք, ուրեմն, Պրն. Հրանտ, որ երկուքս, ես և դուք միեւնոյն ձեւով, միեւնոյն ոգի- ով և միեւնոյն թելագրութիւն- ներով տեսնենք, շօշափենք երբ նոյնիսկ «Միրբոյեան քննադատ- ներ» ըլլալու ալ հովեր կուշ օւ- զենք տալ: Իւրաքանչիւր մար- ցու ստացած գաստիարակութիւ- նը, յարաբերական է անոր կազ- մաբանական ու հոգեբանական տարբեր ըզձանքներուն հետ: Մեր կազմուածքին բնախօսու- թիւնը, շատ մը ուրիշ ընկերա- կան պայմաններու, շրջապատ- յին միջնորդանքով հետ որ մեր շղային, արհնային կամ մազա- յին խառնուածները կը հիւսէ, մեր արտայայտութիւնները իր անմիջական իշխանութեան տակ կը պահէ:

Մարդկային գատին նուիրուած «Իտէալիստ» մը, որ սնած ուս- ճացած է այդ մտքով, այդ ձգտումներով, այդ բնախօսական խառնուածքով, չեմ կարծեք որ մտածէք՝ որ «երբէք» ներկայա- ցընէ օրինակելի անձնաւորու- թիւն մը, երբ անոր հարցնէք իր ճշմարիտ կարծիքը, իր ճար- պալից սեղանէն վառարանին մօ- տը զլորուած ու մոլեկոծօրէն իր մարտողութիւնը «Փշաջող» բուր- ժուան: Ձե՛մ մի որ այստեղ է քնն- նադատութիւնը, իր սաղփին, իր տարրական ձեւին մէջ:

Եթէ ինծի իմ կարծիքս հար- ցընէք քննադատութեան մասին, միշտ համաձայն ըլլալով այն մտքին՝ որը ուրիշ մը քաղած

ԱՐՅՈՒՆԲՈՏ ԱՆՅՆԱԿԷՆ

ՊԱՏՄԱՆԱԿԻՆ

—()—

Տալ գիտնալու կայսեր, Յիսուս

(Կաղանջէք Պատուելի Թումանյանին)

(Շար. նախորդ թիւին)

—Տէ՛ր, Աստուածը որբին, որ- բեւայրիին, անտէրին ու անպաշ- պանին, հաւաքուած ենք այս գիշեր քու անունով՝ քու ծառաներուզ պատուելի եւ արկին—եաններուզ պատուութիւնները լսելու՝ քու կա- տարած հզօր ու անմասնալի գործե- րուզ մասին... Տէ՛ր, անոնց ոյժ եւ սուրբ հոգիդ ներշնչէ իրենց այդ պաշտօնը բեղմնաւոր կերպով յառաջ տանելու, որպէսզի անոնցմով ուրիշ- ներ, որոնք տակալին չեն գտած քեզ գան ու ընտրեալ հոտիդ միանան... Տէ՛ր, օրհնէ զանոնք, օրհնէ իր որ- բերը, որոնցմէ ոմանք մեզի հետ են, ոմանք որբանոցը եւ ոմանք մոթ ու խաւարեալ երկիրը... Անոնց ալ ճան ձցուր ինքզինքդ եւ թէ որ դեռ ի՞

րենց փրկիչը չեն ճանչցած՝ դպիր անոնց սեւ հոգիներուն եւ մաքրէ զանոնք... որպէսզի օր մը վերագառ- նալով իրենց խաւար աշխարհը, ի- րենց միջոցով շատեր քեզի զառնան ու լրտաւոր հաւատքին դիմեն... որ- պէսզի, այդ ճշմարտութիւնը իրենց եղբայրներուն ալ աւտօկով, փրկեն զանոնք եւ ազատեն իրենց դժբախտ ազգը այն ցաւալի տառապանքներէն, որով դուք կը պատժես զիրենք... Այս բոլորը Յիսուսի անունով կը խնդրենք... ամէն...»

—Ամէն... արձագանքեց խոշոր սրահին իւրաքանչիւր անկիւնը եւ խոնարհած զլուսնէրը վեր բարձրա- ցան:

—Երգենք թիւ 465 երգին առա- ջին եւ վերջին համարները, կը պո- աայ նախագահը եւ (ըշնամուրը) օր կանը սկսելով՝ ամբողջ ժողովասրահը կը հետեւի անոր: Այդ արարողու- թիւնն ալ կը վերջանայ, ու հիմա՝ պատուելին բնի հրաւիրուելէ առաջ նախնական ծանօթութիւն մը կը ար- լի հանդիսակալներուն:—

«Միրելի բարեկամներ, այս իրի- կոն մեր մտ ունինք պատուելի եւ տիկին—կանիք, որոնք շատ բաներ

տեսած եւ շատ բաներ րրած են ի- րենց երկրին մէջ, ճիրով խօսքը տա- րածելու համար Պատուելի—եանի- կար ատեն մնացած է թրջական քանակներու մէջ, որուն պատուութիւ- նը, անտարակոյս, բոլորին համար ալ հետաքրքրական է: Կը յուսամ որ ուշի ուշով մտիկ պիտի ընէք զիրքը:—Ուրեմն, պատուելի—եան, պատրաստ ենք լսելու:»

Պատուելին անցեալ դարու քաջա- համբաւ կրօնավաճառներու յատուկ ֆուլթրիզան ժպիտով մը ոտքի կելլէ, ու կը յայտնէ թէ— իս քան սկսիլը հայ տղաքները երգ մը պիտի երգեն:

—Ոոյն երգը, կաւելցնէ, կար- ծեմ պիտի գտնէք ձեր անգղիկէն երգարաններուն մէջ թիւ 660, կը տեսնէք թէ մեր երգերն ալ միեւ- նոյնն են, միմիայն եղանակը փո- խած ենք, գործնելով զայն հայկա- կանի...»

Ու երեք պատանիները, հանկով գրպաններն մէկ-մէկ ձեռագիր երգա- բաններ, կարմրելով, զեղնելով ու կանանչնալով փոփոխակի, զողողուն ձայնով մը կը սկսին պատուելին յարմարացած Պալպը—Հաուզիան

անբանութիւնները (Տալուրիկ) քայ- լերքին եղանակով...

«Ժամն աղօթքի, ժամն աղօթքի, Աղերքս թեւերովդ տարուի, Ծնորհաց ամբար նստողին, Զղջացեալին ձայնն լսողին:

Իրեն գիմել կը պատուիրէ, Ծնորհք ինքզեւ կը հրաւիրէ, Հոգեքս անոր ձգեմ պիտի, Ու երգելով ժամն աղօթքի...»

Տղոցմէ մէկը, իր սովորութեան համաձայն մինչ վերջին բառը երկա՛ր, քայքայուած շնչով մը կը ձայնէ, միւսը յանկարծ կը թողու զայն ու կը սկսի խմբաբար, որ պատուելին բանաստեղծական տաղանդին ձեւա- գին գոհարն է:

«Հայ աղբորիք, մեր աղբորիք, Ասենեւիս մի՛ վհատէք, Ազատութեան սիրով զեղուն, Աղօթքն մի՛շտ առտու իրկուն...»

(Շարունակելի)

էի իմ յօշուածիս մէջ, — թէ քննադատը աւելի հեղինակաւոր պիտի ըլլայ քան իր քննադատած գործը. — ես անի կը բաժնեմ երկու մասի. 1) քննադատութիւն հեղինակութիւններու. 2) քննադատութիւն անձներու. Առաջին պահուն կորելի է դասական սահմանումներ ալ, ու այդ թուարանութեամբ քննադատին հասոյութիւնը «որոշ չափով միայն» ընտրուել. երկրորդ պահուն չեմ կարծեր որ լարելի ըլլայ քննադատութեան որոշ սահման մը գծել: Պրն. Օկտավ Միրբո անհունապէս իրաւունք ունի այդ երկրորդ պարագային մանաւանդ:

Գարձեալ, միջէ անհրաժեշտ է «ճշմարիտ քննադատութեան պահուն» գէժքերու կամ գործերու բացառական կամ գրական կողմերը «միամտամանակ» երեւան բերել: Գործ մը, — ըսէք նոյնպէս անձ մը, երբ ունի բացասականութիւն մը ու ատի միայն կարձէ՞ր արգեօք փնտռել անոր գրական շատ կասկածելի կողմերն եւս: Գործ մը «միջակ» կանուանենք, գուց կը հաւատամ որ ինձմէ աւելի լաւ գիտէք այդ բանը. երբ խառնուրդ մըն է բացասականութեան և գրականութեան. «գնահատելի» երբ անոր գրական կողմերը աւելի աչքի կը զարնեն. «աւթէ» երբ գրելի է միայն բացասականութիւն ունին եւս:

Կը յուսամ որ այս բացատրութիւններովս, ինծի աւելի լաւ հասկցած ըլլալով եթէ որ մը յաջողիմ լրակատարութեն քննադատական ուսումնասիրութիւն մը պատրաստել. կը պատրաստուինք այն ատեն զիրար աւելի լաւ վիճարանիլ, ունենալով հաստատ գրականական հոյ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Ինչքան կառավարութիւնը Պուլկարիայէն կը պահանջէ Տաճեան կրօնքը որ այժմ Սօֆիա կը գըտնուի դատի ենթարկել:

— Եթիպի պուլկար առաջնորդական տեղապահին տունը խուզարկուեր է և տեղապահը ձերբակալուեր է: Հիւպատոսները Իւսկիպի Վալիէն կը պահանջեն խիստ քննութիւն կատարել եւ տեղապահը ազատ արձակել:

ՌՈՒՍԻԱ

Վարչապետի նահանգապետ Չերտկով իր պաշտօնէն արձակուած է:

— Մասկուայի ոստիկանապետ Տրէպով գատարանի կողմէ 40000

ոսրի տուգանքի ենթարկուած տիկին Տէմենկոյի պիւրօն գոցած եւ պաշտօնեաները բանտարկած ըլլալուն:

— Բաղխաթիւ ինժինէրներ հաւաքական ստորագրութիւնով ձայնակցած է Մոսկուայի Չեմստօյի բարենորոգման պահանջներուն:

— Եկատերինսովի ոստիկանապետին վրայ սպանութեան փորձ եղած է. փորձողը ազնուական մըն է և պատճառը չիտայտնել:

ՌՈՒՍ — ՃԱՐՈՆԱԿԱՆ Գ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

Դեկտ. 27ին Խոքթոյէն կը հեռագրեն — Բորթ Արթուրի ուսուցիչներու անձնատուութիւնը երէկ վերջացաւ ընդամենը 878 սպաներ են և 23,491 զարգ զինուորներ որ պէտք է տարուին ձաթոնիւ. ծանր հիւանդները առայժմ կը մնան Բորթ Արթուրի մէջ:

— 878 սպաններէն 441 պատուար խօսք տուած են ճարտի գէժ չի պատերազմիլ և պիտի վերադառնան Ռուսիա. Յոկ. Ս. միրնով, Գարբատովսկի և ամիրալ Վիլման գերադասած են գնորի մնալ: Զօրավար Շթօսէլ Տալնիի վրայով Ռուսիա պիտի մեկնի:

— Ճարտիչները որոշած են Բորթ Արթուրը պատերազմական կարեւոր նաւահանգստի վերածել: Սեանքով կը ժաքեն նաւահանգիստը ականներէ և խորտակած նաւերէ. Դեռ երկար նաւազնացութիւնը անապահով պիտի ըլլայ այժմ միայն կառավարական նաւերը կը հասնին նաւահանգիստ:

— Եթօսէլի և Նօգիի տեսակցութիւնները սկիզբէն քաղաքավարի և վերջը սրբալիր եղած է: Երկու զօրավարները փոխադարձաբար սքանչացում յայտնել են իրարու զօրքերու հանդէպ:

— Մարշալ Սլաժա զլխուոր հրամանատար Գուրբաթիի հեռագրած է Բորթ Արթուրի անձնատուը ըլլալու մասին և իր սքանչացումը յայտնած պաշտպաններուն քաջութեան սոթի:

— Լօնտօն 27 Դեկտ. կը հեռագրեն որ Եթօսէլ մէնէրալ Նօգիի յայտարարած է որ պատերազմին իրական պատճառը այն է որ ռուսները չը գիտէին ճարտական զօրքին որակը: Անձնատուը եղած է, որովհետեւ բերթը միայն քանի մը օր և շատ մեծ զոհողութիւններով պիտի գիմանար, եթէ գիմագրութիւնը շարունակէր: Եթօսէլ յայտարարած է որ Պալիկեան նաւատորմի զալը այլեւս անօգուտ է:

ՌՈՒՍ ՄԱՄՈՒԼԸ ԲՈՐԹ ԱՐԹՈՒՐԻ ԱՌԹԻԻ

«Իրոճեմիա Վէտօմստի» թերթը Բորթ Արթուրի անկումին առթիւ յօդուած մը գրելով կը մեղադրէ ներկայ ուժիմը որ մասնուն ազատութենէ զրկուած ըլլալով, հասարակութիւնը միշտ մոլորի մէջ մնացած է, չէ կըրցած իրողութիւնը հասկնալ եւ ըստ այնմ վարուիլ: Աւայդ յօդուածը կը վերջացնէ հետեւեալ տողերով:

«Բորթ Արթուրը ինկաւ առասպելական հերոսի մը պէս, և անոր աւերակներուն վրայ մնարէնեան գրօշակի փոխարէն սյուսը կը սաւառնի հետեւեալ շշանարանը:

«Աւժը գիտութեան մէջ է, իսկ այն կը տրուի մամուլի ազատութիւնով»:

Նիօվօյէ վրէմիա» թերթին մէջ կապիտան Կարցով յօդուած մը հրատարակելով կըսէ «գեռ երէկ Շթօսէլի մէնէրալները կըսէին «մեր մարդիկը շարժիլ չեն կըրնար, ոտքի վրայ կայնիլ չեն կըրնար, կիյնան, մենք կընանք հըրամաններ արձակել, բայց անոնք մեր հրամանները կատարելու անկարող: այն ատեն գուց պարոն ժենէրալներ կուռեցէք»:

Օտարները և Բորթ Արթուրը

«Մաթէն» թղթակիցը կը հաշորդէ որ Եթօսէլ նախ քան անձնատուը ըլլալը Սարին և Գուրբաթիի կը հեռագրէ թէ արգեօք կընան յուսալ որ ամուսն մը մէջ ու է օգնութիւն մը կը հասնի ու բացասական պատասխան ստանալուն պէս գեկտ. 18ին պատերազմական խորհուրդ կը կազմուի, որուն կը մասնակցին Սմիլնով, եւ Իէյս, Վիտէն Թօք և Լուչչիսկիյ, փենէրալները Եթօսէլի կապացուցանեն որ գիմագրութիւնը շարունակելու կարելի է, որովհետեւ 16000 զօրք հիւանդանոցներու մէջ պահուած են. իսկ մնացածներն ալ հիւանդ և պատերազմական պաշարէ զուրկ են:

Յ Ա Տ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ր

Ա. Անցեալ շաբաթ օր «Մարմուճի հրատարակուեցաւ Պուլկարներու տօներու պատճառով, տպարանները չէին աշխատեր:

— Բ. «Շարժում» նոր տարուան թիւը տալէն յետոյ, տօներու ամբողջ շաբաթին մէջ չը պիտի հրատարակուի:

Հայաստանի քարտէզը սպանուած ըլլալով այլեւս անկարող ենք գիմողներուն գոհացում տալ. ուզողները կընան գիմել միլիպէ Տիար Անտօն Գօշի, որուն մօտ գեռ կը գտնուին:

«Բարկէն Սիւնի» ընթերցարանի Վարչութիւն

ՆՈՐ ԹԵՐԹԵՐ

Սգիպտոսի մէջ սկսած է հրատարակուիլ «Հորիզոն» շաբաթաթերթը, որուն խմբագրական մարմինը կազմուած է տօք. Կ. Փաշայեանէ, Ա. Տէր Գալստեանէ և Յ. Ասատրեանէ:

Գին 18 ֆր. արտասահման 8 ֆր. Եգիպտոսի մէջ:

Հասցէ

Վարչութիւն «Հորիզոնի» Գահիրէ

Նոյնպէս Գահիրէի մէջ սկսած է հրատարակուիլ «Լուսաբեր» թերթը շաբաթը երեք անգամ: Գինն է 20 շիլլինկ:

Հորիզոն կը խոստանայ լուրջ թերթ մը ըլլալ: Յուսանք և հաւատանք որ այդպէս ըլլայ, որովհետեւ Սգիպտոս լուրջ և գրական ուղղութեամբ թերթի մը պէտքը ունի:

ԲԱՎԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ


— 0 —

Տարին վերջանալու մօտ է և մեր բաժանորդներէն շատերը գեռ իրենց բաժնեգրները չեն վճարած:

Կան և այնպիսիները որոնք երկու տարեկան պարտք ունին: Ինչպէս կերելի այդ մարդիկը կը կարծեն թէ մենք թուղթը տէժարը ձրի կառնենք, գրաշարները ու տպարաններն ալ ձրի կաշխատին և մենք հաց չենք ուտեր, այլ օդով կապրինք:

Գիչ մը ազնիւ ըլլալու են մեր չը վճարող բաժանորդները, մանաւանդ անոր համար որ մենք երբէք առանց բաժանորդներու պահանջին թերթ չենք զրկեր մարդու: Պահանջողը և իր պարտականութիւնը կատարելու տարրական գագոյնէն զուրկ չը պիտի ըլլայ:

Խմբագրութիւն



ОТГОВОРНИКЪ

Мурадъ-Браносянъ

Печатница „Взаимность“ Варна

Խմբագրութիւն